HEKS EPER

ČENN
Shaping the Future by Changing Today

# ԿԱՆԱՆՑ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐ ՄԱՌՆԵՈՒԼԻԻ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏՈՒՄ ԽԹԱՆՄԱՆ ԾՐԱԳԻՐ

## Հետաքրքրության արտահայտման մրցույթ

2022 թվականն

# ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

| | |
|---|---|
| **Դոնոր** | HEKS-EPER |
| **Նախագծի անուն** | «Կլիմայի նկատմամբ կայուն գյուղատնտեսություն - PRIASE MARNEULI» |
| **Տեւողությունը** | 4 տարի, 2021 թվականի հունվար - 2024 թվականի դեկտեմբեր |
| **Ծրագրի իրականացնողը** | CENN |
| **Ծրագրի աշխարհագրական տարածքը** | Մառնեուլիի քաղաքապետարան |

«Կլիմայի նկատմամբ կայուն գյուղատնտեսություն - PRIASE MARNEULI» 4 տարվա նախագիծ է, ինչը CENN-ն իրականացնում է 2021 թվականից՝ HEKS-EPER-ի ֆինանսական աջակցությամբ: Ծրագրի նպատակն է Մառնեուլիի քաղաքապետարանում մեծացնել բնակչության համար եկամուտների ստեղծման հնարավորությունները, էկոլոգիայի հանդեպ ընկերական և կլիմայի նկատմամբ կայուն գյուղատնտեսության ներդրում, զարգացման և խթանման միջոցով: Ծրագիրը կենտրոնանում է մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցմամբ (HRBA)՝ հզորացնելու գոյություն ունեցող համայնքային հաստատությունները, ֆերմերներին, կանանց, երիտասարդներին և տեղական շահագրգիռ կողմերին Մառնեուլիի քաղաքապետարանում:

**Ծրագիրը գործում է հետևյալ ոլորտներում.**

**Ստեղծել մունիցիպալ մակարդակում կլիմայի նկատմամբ կայուն գյուղատնտեսական պրակտիկաների ներդրման մեխանիզմներ.** Ստեղծվել է բազմաոլորտային աշխատանքային խումբ (MSWG) հանրային, քաղաքացիական և մասնավոր հատվածների ներգրավմամբ, մշակվել է կլիմայի նկատմամբ կայուն գյուղատնտեսության շրջանակային փաստաթուղթ և կլիմայի փոփոխության հարմարվողականության պլան՝ հարմարեցված տեղական համատեքստին, բնակչության կարիքներին և առաջնահերթություններին:

**Հզորացնել համայնքային հաստատությունները և տեղական շահագրգիռ կողմերին՝ կլիմայական կայուն գյուղատնտեսական պրակտիկաները և մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցումները (HRBAs) իրականացնելու համար.** Ստեղծվել է կարողությունների զարգացման ծրագիր, որի հիման վրա կանցկացվեն թեմատիկ դասընթացներ, սեմինարներ, դաշտային օրեր, ճանաչողական այցեր, հանդիպումներ, քննարկումներ, երիտասարդական կանաչ ճամբարներ, միջնորդություններ:

Կֆինանսավորվեն տեղական նախաձեռնությունները (ենթածախսեր) և կստեղծվի կանանց գյուղատնտեսական կոոպերատիվ՝ **աջակցելու եկամուտ ստեղծելու հնարավորությունների զարգացման և բնակարանային պայմանների բարելավման նպատակով:**

# ՄՐՑՈՒՅԹԻ ՆՊԱՏԱԿԸ և ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԸ

Մրցույթի նպատակն է խթանել համագործակցությունը գյուղատնտեսության ոլորտում Մառնեուլիի մունիցիպալիտետի մասշտաբով, ինչը կնպաստի տեղում եկամուտների ստեղծման հնարավորությունների և տեղական էթնիկ խմբերի միջև համագործակցության բարձրացմանը:

**Հիմնական առաջադրանքներ.**

- Կանանց գյուղատնտեսական կոոպերատիվի ստեղծում և դրա ինստիտուցիոնալ զարգացում, կարողությունների զարգացման միջոցառումների միջոցով (թրեյնինգներ, սեմինարներ, վարպետության դաս).
- Նպաստել կանանց կոոպերատիվի գործունեությանը՝ համապատասխան ֆինանսական աջակցություն ցուցաբերելով կոոպերատիվի գործունեությանը և կարիքներին:

**Mümkün istiqamətlər:**

- ✓ Առաջնային արտադրություն
- ✓ Վերամշակում
- ✓ Արժեքավորում
- ✓ Փաթեթավորում
- ✓ Պահպանում
- ✓ Դիստրիբուցիա
- ✓ Վաճառք

# ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Մրցույթին կարող են մասնակցել առնվազն 9 կանանցից բաղկացած խմբեր ամբողջ Մառնեուլիի քաղաքապետարանից, ովքեր ունեն գյուղատնտեսական արտադրության փորձ: Խմբի անդամների առնվազն **70%-ը (6 հոգանոց 9 հոգանոց կոոպերատիվի դեպքում) պետք է լինի էթնիկ փոքրամասնությունից:** Մրցույթին չեն կարող մասնակցելարդեն գործող, գրանցված գյուղատնտեսական կոոպերատիվները:

# ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Մրցույթի շրջանակներում կընտրվի մեկ խումբ, որը կգրանցվի հանրային ռեգիստրում և պաշտոնապես կստեղծվի որպես գյուղատնտեսական կոոպերատիվ: Մինչև 2022 թվականի վերջը նորաստեղծ կոոպերատիվի անդամներին կտրամադրվեն գյուղատնտեսական կոոպերատիվների կառավարման և գործունեության կարողությունների զարգացման միջացառումներ (վերապատրաստումներ, սեմինարներ, ճանաչողական շրջագայություններ):

2023 թվականին կոոպերատիվի համար ֆինանսական աջակցություն կլինի (Առավելագույնը18000 լարիի չափով): Ծրագրի կողմից ֆինանսական ներդրումները կօգտագործվեն կոոպերատիվի (արտադրական օբյեկտներ (բացի շրջանառու միջոցներից), մեքենաներ, սարքավորումներ, շենքի սպասարկում և այլն) կարիքները հոգալու համար:

Կարևոր է նշել, որ ֆինանսական ներդրումները պետք է համահունչ լինեն կլիմայի համար կայուն գյուղատնտեսական գործելակերպին և պետք է դյուրացնեն կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարվողականության մեխանիզմների ներդրումը:

Ծրագրի ընթացքում և դրա ավարտից հետո 1 տարվա ընթացքում կոոպերատիվի ներկայացուցիչները վերահսկելու են կոոպերատիվի գործունեությունը:

# ԴԻՄՈՒՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Մրցույթին մասնակցել ցանկացողները պետք է հայտ ներկայացնեն ոչ ուշ, քան 2022 թվականի մայիսի 20 ժամը 18:00-ն հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ sopiko.babalashvili@cenn.org (Խնդրում ենք, նամակի վերնագրի տողում նշել. «Կոոպերատիվների ընտրության մրցույթ»):

Մասնավորապես, դիմորդները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- Հավելված 1 - Դիմումի ձև.
- Հավելված 2 - Խմբի անդամների օգտագործման մեջ, սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական ակտիվների (հողտարածք, շենք, սարքավորումներ) ֆոտոնյութեր և սեփականության, օգտագործման հաստատող փաստաթղթեր.

# ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ և ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ներկայացված հայտերը քննարկելու համար ստեղծվել է 5 անդամից (CENN ներկայացուցիչներ) կազմված ընտրող հանձնաժողով: Դիմորդները գնահատվելու են հետևյալ չափանիշներով.

- Մրցույթին մասնակցելու պայմանների պահպանում (առնվազն 9 կանանցից բաղկացած խումբ, էթնիկ փոքրամասնությունների առնվազն 70%).
- Գյուղմթերքների արտադրության ոլորտում գիտելիքներ և փորձ.
- Հիմնավորված համատեղ կարիք.
- Ուժեղ մոտիվացիա և կայունություն (ծրագրի ավարտից հետո կոոպերատիվի շարունակական գործունեության պլան).
- Պահանջվող և ներկայացված փաստաթղթերի ամբողջականություն.

# ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Կոնտակտային անձ՝

**Սոփիկո Բաբալաշվիլի**
գյուղական զարգացման պատասխանատու
(**sopiko.babalashvili@cenn.org**)

**Նիլուֆեր Կուրբանովա**
Ֆերմերների մոբիլիզացման և կարողությունների զարգացման համակարգող
(**nilufer.kurbanova@cenn.org**)
T: +995 599 02 30 90

HEKS EPER

ვამაყობთ მრავალფეროვნებით

ČENN

Shaping the Future by Changing Today